ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2025 թվականի N 1960 - Ա

ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հոկտեմբերի 16-ի N 1469-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկին (այսուհետ՝ հիմնարկ) ամրակցված՝ քաղ. Երևան, Արշակունյաց 2 հասցեում գտնվող 1,7 հա հողամասը և դրա վրա գտնվող 6356,35 քառ. մետր մակերեսով շենքերն ու շինությունները (այսուհետ՝ գույք) հետ վերցնել և ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե):

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին և կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում ապահովել գույքի ճշգրտված տվյալներով իրավունքների պետական գրանցման և հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակա-տարողական ծառայության պետին՝ ապահովել՝

1) N 1 հավելվածով նախատեսված հիմնարկի շարժական գույքերի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը և դրանց՝ հիմնարկից փաստացի տեղափոխումը՝ մինչև 2026 թվականի հունվարի 30-ը.

2) N 3 հավելվածով նախատեսված հիմնարկի կադրային, հաշվապահական, ֆինանսատնտեսական, արխիվային և ոչ գաղտնի փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ը, իսկ ընթացիկ փաստաթղթերի արխիվացման և հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ հիմնարկի գործունեությունը դադարեցնելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում.

3) հիմնարկի գաղտնի և հույժ գաղտնի արխիվային անվանացուցակային գործերի, մատյանների և փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ը, իսկ ընթացիկ փաստաթղթերի արխիվացման և հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ հիմնարկի գործունեությունը դադարեցնելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Հիմնարկի հաշվեկշռում առկա բժշկական նշանակության գույքը՝ ներառյալ ակնադիտական իր նպատակային նշանակության համար ոչ պիտանի բժշկական գույքը, հիմնարկի թոքաբանական բաժանմունքում առկա ռենտգեն սենյակի գույքը և սարքավորումները՝ «Ռենտգեն ախտորոշման բազմաֆունկցիոնալ համալիր», որը ներկառուցված է հիշյալ սենյակում՝ առանց ապամոնտաժման (այսուհետ՝ բժշկական գույք)՝ համաձայն N 2 հավելվածի, հանձնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ին:

5. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ ապահովել

բժշկական նշանակության գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը և դրանց՝ հիմնարկից փաստացի տեղափոխումը՝ մինչև 2026 թվականի հունվարի 30-ը:

6. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ հիմնարկի գործունեությունը դադարեցնելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, ապահովել հիմնարկի կնիքների, դրոշմակնիքների և մետաղական կնիքների սահմանված կարգով ոչնչացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ